

կան անդամներ են եղել որով իրաւունք պէտք է ստանային արքայութիւն մտնելու:—Այսպէս ուրեմն այն վէմը որի վերայ շինուած է Բրիտոսի Եկեղեցին՝ ոչ թէ Առաքելոց գլուխ և նուիրապետական անսահման իշխանութեամբ օժտուած Պետրոսն է, այլ հաւատացող Պետրոսը և Եկեղեցւոյ հաստատութեան ու յարատեւ շինութեան և զարգացման պայման նորա երեսկայական յաջորդների իշխանասիրական ձգտումները պահպանելը չէ՝ հռոմի աթոռի վերայ, այլ նորա խոստովանած հաւատն անաղարտ և կենդանի պահելը՝ ի սփիւռս աշխարհի ցրուած ծշմարիտ քրիստոնեաների սրտերում:

Ամեն տեղ, ուր Բրիտոս ծշմարիտ հաստացողներ է գտել, այնտեղ և շինել է իւր Եկեղեցին, այնտեղ հաստատել է իւր երկնաւոր իշխանութեան աթոռը՝ Հօր հոգով և ծշմարտութեամբ երկրպագողներ, և ոչ աշխարհային փառաց կոյր զինուորներ՝ ժողովելու համար: Մի նոր Պետրոս՝ ոչ խօսքով միայն, այլ անպատում շարչարանքներով իւր անխախտելի հաւատը խոստովանող մի հաւատարիմ վկայ էր նաև մեր Մեծ Լուսաւոր իշը: Հաւատով զօրացած նա իւր աղաչաւոր բազուկները դէպի երկինք կառկառեց, դէպի Բրիտոս՝ Աստուծոյ Որդին և եկաւ իջաւ Երկնաւոր Անմահ Ծարտարապետը, իւր առաքեալների արեամբ շաղախուած գետնի վերայ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ լուսեղէն կամարները հաստատեց՝ հաստատեց առաքելական իշխանութեան այն Մայր Աթոռը, որի վերայ բազմոցները գիտակցել են միշտ թէ իրենք խոնարհ սպասաւորներ են միայն իսկական Աթոռակալի՝ Նորա փառքը որոնելու, Նորա խօսքը քարոզելու, Նորա հաւատը կենդանի պահելու կոչուած: Եւ որչափ աւելի կենդանի լինի այդ հաւատը հայ մարդոց սրտերում՝ նոյնչափ աւելի շէն կլինի և պայծառ Հայաստանեայց ս. Եկեղեցին, նոյնչափ աւելի մեծ Մայր Աթոռի փառքն ու հեղինակութիւնը: Լուսաւորչի լոյս հաւատն է այդ, և ոչ որ և է արտաքին առաւելութիւն կամ զօրութիւն, որ մեր եկեղեցին պահպանել և զօրացնել, եկեղեցւոյ պաշտօնեաներին անձնուէր ոգեւորութեամբ, եկեղեցւոյ զաւակներ

րին մաքուր բարեպաշտութեամբ և հաւատարիմ սիրոյ զգացումներով լեցնել կարող է: Հաւատը դէպի Բրիտոս մի երկնային զօրութիւն է, որ մեզ կտրոււմ է կրքերի և մարմնական ցանկութիւնների աշխարհից և բարոյական վսեմ գաղափարական երկնաւոր կեանքի ընդունակ դարձնում: Դժոխքի դռներից չյաղթահարուողներ Բրիտոսի այն ծշմարիտ հաւատացեալներն են, որոնք անցաւոր և ապականացու աշխարհի մէջ մի յաւիտենական և անապական ինչ ճանաչում են. գիտեն որ խիստ անշուք կերպարանքի ներքոյ է յայտնուում այդ յաւիտենականը, համբերութեամբ նեղութիւններ ու զրկանքներ տանելով միայն ձեռք բերուում: Համոզուած են, որ երկինք և երկիր անցնել կարող են, բայց յանուն Բրիտոսի ծշմարիտ խոստովանութեամբ և առաքինական նահատակութեամբ ձեռք բերուած այդ երկնային բարիքն անցնել չէ կարող: Աստուծոյ Միածին Որդին այդպիսի հաւատացեալներ է պահանջում: Իւր իշխանութիւնը երկրի վերայ հաստատ պահելու համար, հայ հաւատացեալներ՝ Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռից յարատեւ իշխելու և իւր կենարար շնորհները սփռելու համար:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

ԵՒ

ԱՂ.ՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ.

Գ.

ԱՂ.ՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ.

Ի.

Ներքին առաքելութիւն և արտաքին առաքելութիւն:

(Շարունակութիւն) *

Անցեալ երկու գլուխներում փորձեցինք համառօտ նկարագրել, թէ ինչ կազմակերպութիւն էր ստացել աղքատների խնամատարութիւնը քրիստոնէական համայնքների և հաս-

* Տե՛ս «Արարես» 1897 թ. մայիս, յունիս եւ յուլիս թիւերով:

տատութիւնների մէջ: Այժմ՝ աշխատենք հակիրճ կերպով ներկայացնել աղքատների խնամատարութեան կամ քրիստոնէական բարեգործութեան վիճակը մեր դարում: Եւրոպայի մէջ: Միջին և նոր դարը մենք զանց ենք անում: որովհետեւ որքան և հետաքրքրական իրողութիւններ ունենանք հաղորդելու, կամ էապէս նոյն են, ինչ որ յայտնել ենք եկեղեցու հին դարերում եղած խնամատարութեան մասին, կամ նոր բողոքներ են, որոնց ծաղկումն այժմ պէտք է նկարագրենք: Աղքատների խնամատարութեան գործը և նորա հետ կցորդուած քրիստոնէական հաստատութիւններն այնքան բարդ են, որ մի յօդուածով հազիւ կարելի լինի ամփոփ դադափար տալ: Մենք կաշխատենք շատ թուցիկ կերպով մատնացոյց անել հարկաւոր կէտերը, յատկապէս այն մասերը, որ մենք Եւրոպայում եղած ժամանակ անձամբ տեսել և ուսումնասիրել ենք:

Ներկայ դարում քրիստոնէական բարեգործութիւնը իւր բազմաոտեսակ հաստատութիւններով, ինչպէս և աղքատների խնամատարութեան գործը՝ մեծ մասամբ ներքին միսիոն գաղափարի տակ է ամփոփուած:

Միսիոն լատինական բառ է՝ missio, որ առաքելութիւն է նշանակում. առաքելութիւն Բրիտոսի պատուէրի համաձայն, բայց ոչ հեթանոս աղգերի, այլ քրիստոնեայ ժողովրդի մէջ: Այս առաքելութիւնը չպէտք է շփոթել նաեւ այն առաքելութեան հետ, որ կաթոլիկները կամ բողոքականները կատարում են արևելեան եկեղեցիների, ինչպէս և Հայաստանեայց եկեղեցու մէջ, մեր ապիկարութեան պատճառով: Իւրաքանչիւր ազգի կամ եկեղեցու ներքին առաքելութիւնը իւր ժողովրդի և հաւատացեալների մէջ է գործում: Ներքին առաքելութեան նպատակն է քրիստոնէական հաւատը և սիրոյ գործունէութիւնը կենդանի պահել և զօրացնել ժողովրդի մէջ: Նորա նպատակն է մաքառել անհաւատութեան և նորա հետ սերտ կապուած բազմաոտեսակ անբարոյական երևոյթների դէմ և ընդհանրապէս գթութեան և սիրոյ ձեռք մեկնել բարոյապէս և նիւթապէս կարօտեալին: Այս նպատակի համաձայն ներքին առաքելութեան

գործը երեք կէտերի մէջ է ամփոփուած՝ սիրոյ գործունէութեան կամ ողորմածութեան, աւետարանի ազատ քարոզութեան՝ այսինքն եկեղեցուց դուրս և ոչ անպայման քահանայի բերանով, և եկեղեցու բարեփոխութեան: Մեզ համար ամենակարեւոր և մեր նիւթի հետ կապ ունեցողը առաջին կէտն է, այսինքն քրիստոնէական ողորմածութիւնը:

Բողոքական եկեղեցու մէջ թէ Գերմանիայում և թէ Անգլիայում ներքին առաքելութիւնը եկեղեցու վարչութիւնից համարեա անկախ մի հաստատութիւն է, թէ և իւր ձգտումներով և գործունէութեամբ միանգամայն համերաշխ է եկեղեցու հետ, և երկու հաստատութիւնների վարչութիւնները ձեռք ձեռքի տուած են գործում: Շատ տեղերում նոյն իսկ մի և նոյն անձնաւորութիւնը երկու հաստատութիւնների մէջ ևս պաշտօն ունի: Կաթոլիկ եկեղեցուն պատկանող բոլոր հաստատութիւնները վարչական տեսակէտով ևս կապուած են եկեղեցու հետ, այստեղ չկայ ներքին առաքելութիւն բոլորովին նոյն իմաստով, ինչ որ բողոքականութեան մէջ, բայց գործը կայ: Կաթոլիկներն ունին առաքելութեան գործին նուիրուած քահանայութիւն և իրենց աստուածահաճոյ հաստատութիւններով, որ ինչպէս կոեսնենք, ներքին առաքելութեան ոյժն են կազմում ամենեւին յետ չեն մնում բողոքականներից: Ներքին առաքելութիւնը եկեղեցու նորագոյն պատմութեան մէջ ամենախորին ուշադրութեան արժանի երևոյթներից մէկն է, ուստի և աւելորդ չենք համարում նորա ծագման պատմութեան մասին դոնէ ամենաթեթեւ գաղափար տալ:

Կաթոլիկ եկեղեցու մէջ այս նոր շարժումը Փրանսիայումն է սկսուած դեռևս Լուդովիկոս Ժ-ի և Ժ-ի ժամանակներից և կապուած է Վինցենցի անուան հետ: Նա զիւղացու որդի էր և հասարակ քահանայ. իւր ժամանակի ազնուականութեան լաւագոյն շրջաններում ել ու մուտ ունենալով հանդերձ՝ պարզ և համեստ կեանք էր վարում: Վերին աստիճանի ընդունակ էր նա և կարող, բայց երբեք հետամուտ չեղաւ բարձր պաշտօնների՝ ուխտելով իւր կեանքը աղքատներին նուիրել: Վառ կրօնասիրութեան հետ նորա մէջ միա-

ցած էր և գործնական խելքը՝ այդ երկու յատկութիւններով կարողացաւ նա աղքատների խնամատարութեան գործը հիմնովին բարեփոխել: Մա բաղմամբ և հաստատութիւնների հիմնադիր դարձաւ՝ առաջին օրինակը տալով յետագայ պատմութեան: Սորանից են սկիզբն առնում Filles de la charité—ողորմածութեան դստերը, Confréries de la charité—ողորմածութեան եղբայրութիւնների, առաքելական քահանայութեան, ընկեցիկ մանուկների խնամատարութեան հաստատութիւնները: Մա է հիմնել Փարիզի նշանաւոր հիւանդանոցը «Եանուն Եիսուսի»: Սորա ամենամեծ գործը Filles de la charité հաստատութիւնն է: Հայ ընթերցողներից շատերին յայտնի է թէ որպիսի մեծ նշանակութիւն ունի այժմ այդ հաստատութիւնը Նւրպայի բոլոր ազգերի կեանքում: Եկեղեցու պատմութեան մէջ սա առաջին փորձն էր կնոջ թող համարուած ուժերը Զրիստոսի սիրոյ պողաբերութեան համար գործադրել: Վինցենցն էր, որ առաջին անգամ գնահատեց կնոջ քնքոյշ զգացմունքը դէպի չքաւորն ու կարօտեալը, դէպի հիւանդն ու աշխատանքի անընդունակ թըշուառը: Վինցենցի հոգին քրիստոնէական սիրոյ և պատրաստակամութեան հոգին էր, որ հաւատում էր, թէ յանձին աղքատների ծիրոյն է ծառայում: այդ հոգին ևս աշխատեց նա ներշնչել իւր «քոյրերի» մէջ՝ օգնական ունենալով Թիլին դը Գրասին: Այդ ժամանակուանից սկսած աղքատների և հիւանդների, որբերի և անօգնական մանուկների խնամատարութեան գործը նոր կերպարանք է ստանում, որովհետեւ հանդէս են գալիս այնպիսի հաստատութիւններ, որոնց պաշտօնեաների կեանքի նպատակը աղքատների և թշուառների խնամատարութիւնն է դառնում: Այս երեւոյթը թէ և հին է և քրիստոնէութեան ծագման պատմութեան հետ կապուած, բայց Վինցենցն էր, որ նորից կենդանացրեց և քաղաքակիրթ ազգերի պատմութեան էական գործօններից մէկը դարձրեց: Վինցենց մեռաւ 1660 թ.-ին *

Ներքին առաքելութեան ծագման պատ-

մութեան մէջ Վինցենցից յետոյ նշանաւոր անձնաւորութիւններ կան յիշելու թէ կաթոլիկների և թէ բողոքականների կողմից: Բայց որքան էլ շահագրգիռ լինի մեզ համար այդ անձնաւորութիւնների կեանքի ու գործերի նկարագրութիւնը, մենք ստիպուած ենք թողնել տեղի սղութեան պատճառով: Անկարելի է միայն զանց անել Վիխերնի անձնաւորութիւնը, որ արդի Ներքին առաքելութեան հայրն է գերմանական բողոքականութեան համար: Վիխերն ծնուել է 1808 թ.: Սորա մանկութիւնը հէնց մի նախապատրաստական շրջան էր ապագայի գործունէութեան համար: Հօր վաղաժամ մահուանից յետոյ՝ նա ստիպուած էր իւր ուսումը շարունակելով հանդերձ, մասնաւոր դասեր տալով օժանդակել իւր ընտանեաց կարիքներին: Դեռ ևս ուսանողութեան ժամանակուանից իւր ազատ ժամերը ժողովրդի ծառայութեան էր նուիրում՝ քարոզելով Բելլինի մօտ գտնուած Սպանդաու քաղաքի եկեղեցում: Պատանեկութեան օրերից նկատելի էին նորա հակումները: Այդ ժամանակ արդէն նա ծրագրիրներ էր կազմում՝ աղքատ մանուկների կրթութեան համար, յարաբերութիւն ունէր ժամանակակից այն նշանաւոր անձնաւորութիւնների հետ, որոնք աղքատների խնամատարութեան գործում աչքի ընկնող տեղ էին բռնում, և մինչև իսկ բարեկամների շրջանի մէջ մի դասախօսութիւն կարգաց երիտասարդութեան բարոյական անկման մասին: որից փչացած երեխաների դաստիարակութեան համար մի հաստատութիւն հիմնելու միտքը ծագեց: Մա իւր գործն սկսեց Համբուրգի մօտակայ Հորնում, շատ փոքրով՝ նախ 3, ապա 12 երեխաներով: Վիխերն իւր բոլոր կարողութեամբ անձնատուր եղաւ այդ երեխաներին: Այսպէս համեստ կերպով սկսուեցաւ այն նշանաւոր հաստատութիւնը, որ ամեն տեղ յայտնի է Rauheshaus անունով, և որը Գերմանիայի հարիւրաւոր նման հաստատութիւնների առաջին օրինակը եղաւ: *

Այդ հաստատութիւնները փրկութեան տներ են կոչուում, որովհետեւ նոցա մէջ դաստիարակուող երեխաների մեծագոյն մասը

* Ulhorn III, էր. 211—229.

* Schäfer էր. 52—53.

կորստեան անդունդից են յափշտակուում: Դոքա այնպիսի ծնողների զաւակներ են, որոնք իրենց ծնողական յարկի տակ դաստիարակութեան տեղ ամեն տեսակ չար սերմեր են ստացել: Օրինակ ծնողները բարոյապէս ընկած են, կամ ծածուկ մուրացկանութեամբ են զրազուում և իրենց փոքրահասակ երեխաներին էլ ստիպում են սատար լինել այդ գործի մէջ. չքաւորութեան պատրուակով ծնողներն ստիպում են փոքրահասակ երեխաներին մինչև կէս զիշեր փողոցէ փողոց պտըտել շուկայի ծախելէ սպառնալով՝ որ եթէ այսքան կամ այնքան փող չբերեն, ծեծ կուտեն: Եւստիս պատահում է, որ խեղճ երեխաների քունը տանում է և փողոցի մի անկիւնն են ընկնում: Շատ ծնողներ գողութեան գործում մասնակից են անում և իրենց փոքրահասակ երեխաներին: Ահա այսպիսիներին են այդ հաստատութիւնների մէջ ընդունում: ուստի և իրաւամբ փրկութեան տուն են կոչուում: Բայց յաճախ պատահում են և այնպիսի երեխաներ, որոնք վատ ընթացք են բռնում, չնայելով ծնողներն ամեն կերպով աշխատում են ուղղել նոցա պակասութիւնները: օրինակ խուսափում են կարգալուց, կամ տնից փոքրիկ գողութիւններ են անում և ինչ այն ինչ միւս եղբայրները և քոյրերը օրինակելի են վարք ու բարքով: Հարուստները այդպիսի զաւակներին առ ժամանակ ուրիշ ընտանիքի են յանձնում կրթելու: իրաւունք տալով՝ որ խստութեամբ վարուեն նոցա հետ, երբ իրենք անկարող են կարգի բերելու: Իսկ աղքատ ընտանիքի զաւակները փրկութեան տներն էին տարւում: քանի որ ուսումը պարտադիր չէր: Այժմ 6—12 տարեկան երեխաներին փրկութեան տան մէջ միայն այն դէպքում կ'աւտարակեն, եթէ նա որ և է չարագործութիւն է կատարել, որի մասին օրէնքը նախատեսել է. որովհետև այստեղ աւելի խիստ են վարուում և մարմնասպէս ևս աշխատեցնում են: Բայց սովորաբար փրկութեան տների սաները վարք ու բարքի մէջ թերութիւն ցոյց տուած պատանիներ են:

Այս միջանկեալ ծանօթութիւնը նորա համար աւելացրինք, որ մեր ընթերցողներին հասկանալի լինի Վիխերնի կատարած քրիս-

տոնէական մեծ գործը: Նա իւր հաստատութեան հողին էր. ժամերով խաղում երգում էր երեխաների հետ, բայց և մի նոյն ժամանակ կրօնական զգացմունքի և լրջմտութեան սերմեր ցանում: նոցա մատաղ սրտի մէջ: Զրիստոնէական դաստիարակութեան գործում Վիխերն Պեստալցցու գործի շարունակողն է: Փրկութեան տան հետ շուտով միացաւ մի ուրիշ հաստատութիւն—Brüderhaus—եղբայրանոցը: Եղբայրանոցի սաները, որ երիտասարդ մարդիկ էին, եղբայրական յարաբերութիւն պէտք է ունենային փրկութեան տան սաների հետ, ուստի և փոքրերից եղբայր պիտի կոչուէին: Տեղական հանգամանքների հետ կապուած եղբայր և եղբայրանոց անունը ընդհանուր դարձաւ բոլոր նման հաստատութիւնների համար: Եղբայրները Վիխերնի օգնականներն էին դաստիարակութեան գործում: Բայց մի և նոյն ժամանակ իրենք պէտք է տեսականապէս և գործնականապէս վարժուէին քրիստոնէական բարեգործութեան, և հաստատութիւնների մէջ սպասաւորութեան պաշտօն կատարելու: Սոքա վարժուում էին աղքատների խնամատարութեան և հիւանդապահութեան համար: Այդ պատճառով էլ աղքատների խնամատարութեան պաշտօնէութեան ժամանակ սարկաւազ են կոչուում: առաքելական շրջանի սարկաւազութիւնը աչքի առաջ ունենալով: Ինչ որ Վինցենցը կաթոլիկ եկեղեցու բարեգործութեան համար արաւ, նոյնն արաւ և Վիխերն բողոքական եկեղեցու համար: Բայց աւելի մեծ չափով: Տարբերութիւնն այն էր, որ Վինցենց յատկապէս կանանց սեռից պաշտօնեաներ պատրաստեց բարեգործութեան համար, այն ինչ Վիխերնը արական սեռից: Բողոքականութեան սարկաւազուհիների հաստատութեան հիմնադիրը մի ուրիշ նշանաւոր անձն եղաւ 1833 թ. Կոպենհագենի թիւում: Թէոֆոր Փլիդներ: Այժմ Գերմանիայում երկու սեռի համար ևս բազմաթիւ հաստատութիւններ կան, որոնց մէջ հազարաւոր անձնաւորութիւններ են պատրաստուում և գործում են ոչ միայն իրենց հայրենիքում այլ և զայլթափայրերում:

Ողորմած քոյրերի հաստատութիւնը կաթոլիկների մէջ և սարկաւազուհիների հաս-

տատութիւնները բողոքական եկեղեցիների մէջ քրիստոնէական բարեգործութեան շարժիչ ուժերն են, և այսօր ոչ մի պետութիւն և ոչ մի եկեղեցի չկայ որ աղքատների և հիւանդների խնամատարութեան համար այդ կարևոր ուժերը չգործադրէ: Բացառութիւնը հայոց եկեղեցին է կազմում Սակայն մենք ևս այդպիսի ուժերից օգտուելու հնարաւորութիւնից բոլորովին զուրկ չենք: Մեր փոքրածիւր կուսանոցները ժողովրդին և եկեղեցուն մեծ ծառայութիւններ կարող էին մատուցանել, եթէ աղքատների և հիւանդների խնամատարութեան գործը նոյա գոյութեան նպատակ դառնար: Բայց թէ ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով, այդ մասին յուսով ենք առիթ կունենանք մեր համեստ կարծիքները մի ուրիշ անգամ յայտնելու:

Վիխերնի ամենամեծ գործն, ասացինք, ներքին առաքելութիւնն էր: Այդ գործի սկզբնաւորութիւնը 1848 թ. դրուեցաւ, երկրորդ յեղափոխութեան տարին: Այս դարու քսանական թուականներին Գերմանացոյ ժողովրդի մէջ մօտաւորապէս այն գաղափարներն էին իշխում կրօնի և եկեղեցու վերաբերութեամբ, ինչ որ այսօր մեր «լուսաւորեալ» դասակարգի մէջ: Եկեղեցին աղքատութիւն չունէր ժողովրդի բարոյական և կրօնական դաստիարակութեան վերայ, և աղքատութեան այդպէս պակասելուն համար եկեղեցին ինքն էլ բոլորովին անմեղադիր չէր: Կրօնական անտարբերութեան հետեանքները հետզհետէ երևան եկան ժողովրդի կեանքում ամենաբուռն կերպով 1848 թուականին: Առաջ էլ եկեղեցու պաշտօնականներից շատերը նկատել էին վտանգը և մի շարժում էր սկսուած դորա առաջն առնելու համար: Սակայն յեղափոխութիւնը և նորա ցոյց տուած բարոյական անկման վիճակը մեծ զարկ տուեց գործի յառաջդիմութեան: Նոյն իսկ յեղափոխութեան տարին Գերմանիոյ բողոքական դաւանութիւնները ընդհանուր ժողով գումարեցին Վիրտսմերգում, որի նպատակն էր եկեղեցական—ազգային համագումար ժողով ստեղծել՝ եկեղեցու վարչութիւնների ձեռնառութեամբ և ղեկավարութեամբ: Համագումար ժողովը պէտք է միջոցներ որոշէր մաքառելու ժողովրդի մէջ

առաջ եկած չարիքների դէմ՝ աշխատելով զօրացնել եկեղեցու բարոյական աղքատութիւնը ժողովրդի վերայ: Ժամանակի բոլոր սրտացաւ մարդիկ ժողովի էին եկել, այդտեղ էր և Վիխերն, որ եկել էր իւր ծրագիրներն ու մաքերըն ընդհանուր ժողովի առաջ դնելու: Մեծ դժուարութեամբ կարողացաւ նա իրաւունք ստանալ ձառնելու, բայց միանգամայն անսպասելի էր այն ոգևորութիւնն ու համակրութիւնը, որ կարողացաւ զարթեցնել ժողովականների մէջ: Կարճ միջոցից յետոյ փոխուեցան ժողովի սկզբնական դիտաւորութիւններն և տեղը ներքին միսիոնը զարգացաւ: *

Մի տարի յետոյ Վիխերն հրատարակեց իւր մտքերն ու ծրագիրները ներքին առաքելութեան կեդրոնական յանձնաժողովի յանձնարարութեամբ: Մեր առաջ դրուած է այժմ նոյն գրքի երրորդ տպագրութիւնն անփոփոխ: ** Պէտք է անձամբ կարդալ այդ գիրքը տեսնելու համար, թէ որպիսի հոգու և սրտի տէր անձնաւորութիւն էր նորա հեղինակը: Վիխերնը 1848-ի ատենախօսութեամբ և այս գրքով կարողացաւ ի մի խմբել ժողովրդի մէջ եղած քրիստոնէական բոլոր բարեգործութիւններն ու հաստատութիւնները: Նա կարողացաւ ներքին առաքելութեան համար մշտական կեդրոնական յանձնաժողով կազմել, որ պէտք է համագումար ժողովի համար ծրագիր պատրաստէր և նիւթեր մշակել տար: Մինչև այսօր էլ գոյութիւն ունին թէ յանձնաժողովը և թէ համագումար ժողովները: Սորանից երկու տարի առաջ ներքին առաքելութեան 28-րդ համագումար ժողովը Պոզնն քաղաքում գումարուեցաւ, ուր շատ կենդանի հարցեր արծարծուեցան, ի միջի այլոց պանդխտութեան և նորա հետ կապուած հոգեւոր և բարոյական չարիքների հարցը: Բայց Վիխերն ներքին առաքելութեան գործը գլուխ բերելուց յետոյ հանգիստ չնստեց, նա բազմաթիւ ճանապարհորդութիւններ էր կատարում ամենայն տեղ դասախօսութիւններ կարդալով և համակրութիւն զարթեցնելով հասարակու-

* Ullhorn III. 355—56.

** Die innere Mission der deutschen evangelischen Kirche. Hamburg, 1889.

Թեան մէջ: Այդպիսով կարողանում էր նա մի և նոյն ժամանակ դրամական նուէրներ հաւաքել իւր իսկ հիմնած հաստատութիւնների համար: 1857 թ.-ին Վիսերնը կառավարութիւնից բարձր պաշտօններ ստացաւ՝ բանտարկեալների և աղքատների խնամատարութեան համար օրէնքներ մշակելու: Մա մեռաւ 1881 թ.-ին, վերջին տարիները բոլորովին հիւանդ և ուժասպառ:

(Կը շարունակուի...)

Դարեգին Վարդ. Յովսէփեան.



ՅԱՃԱՆՈՒՄԱՆՈՒՄԻ ԻԳՐՈՂ ԺԱՌԸ.

ԺՈՒՄՆԵ ԾԳՆԱՆՈՐԱՅ ԵՒ ՅՈՅՅԵ ՀԱՆԳԻՍՈՒՑ,
ՈՐ ՅԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆ ՅՈՐԳՈՐԵՆ:



Վանքը, որ այնքան մեծ պատմական դեր է կատարել և եկեղեցական կեանքի մէջ զօրեղ գործօն ոյժ հանդիսացել՝ յառաջ եկաւ Դ. դարում: Եկեղեցւոյ յաղթութեան հետ քրիստոնէական-բարոյական կեանքի մէջ իշխող դարձան ի սկզբանէ անտի նորա գրկում սնուցած ծգնական գաղափարները. մարմինը իսպառ սպանել՝ հոգւոյ փրկութեան հասնելու համար, այդ էր նշանաբանը, որով գէպի վերջնական կատարելութիւն պէտք է առաջնորդուէին: Այս գաղափարների ազդեցութիւնը այնքան մեծ էր ժամանակակիցների վրայ, որ շուտով անապատները լեցուեցան ամեն կարգի և հասկացողութեան աէր մարդոց բազմութեամբ: Անապատականների խմբակցութիւնից յառաջ եկան վանքերը՝ նախ Եգիպտոսում, ապա և Պաղեստինում, Ասորիքում և այլ ուրեք: Վանքերի առաջին կազմակերպողը համարուում է Պախովիոս՝ 292—348 թ. բայց հաստատուն հիմունքների վերայ դնողը, կանոնաւորողը և եկեղեցական կեանքի հետ սերտ կերպով կապողը եղաւ մեծն Բարսեղ Սեսարացին (330—379 թ.): Իւր կեանքի առաջին տարիներում նա ևս

յափշտակուեց առանձնական կեանքով՝ համարելով այն կատարելալ, հրեշտականման, ճշմարիտ փիլիսոփայական կեանք. բայց երկար ծանապարհորդութիւնից յետոյ, տարիների ընթացքում, անձնական փորձերով հասաւ այլ համոզման: Միայնակեցի կեանքը «Հարցողաց» գրքի մէջ անուանում է նա «անպատու» տեսական կեանք, նորա հոգւոյ առաջ պատկերացող կատարելութիւնը սիրոյ պատուէրի մարմնացումն է գործնական կեանքի մէջ՝ մի գաղափար, որ այնուհետեւ մեծն Բարսեղի ամբողջ կեանքի առաջնորդողն է դառնում: Պատուէրների մեծը և առաջինը՝ աւետարանի էութիւնը կազմող սիրոյ պատուէրը, որ առօրեայ կեանքի մէջ հնարաւորութիւն չկար այլ ևս իրականացնելու. ուստի և նա հիմնում է աշխարհից առանձնացած եղբայրութիւն-վանք, սիրոյ և սորանից բղխող հնազանդութեան, խոնարհութեան ու հաւատարմութեան սկզբունքների վրայ հաստատուած. իսկ սիրոյ գործն է քաղցածին կերակրել, մերկին զգեցնել, հիւանդին թըրուառին խնամել, օգնութեան հասնել և ինչ, մի խօսքով բարեգործութիւն՝ բառիս ընդարձակ նշանակութեամբ: Այս նպատակին ձգտող վանքերի մէջ մեծ տեղ է բռնում աշխատանքը, ոչ միայն իբրեւ բարոյական կրթութեան կամ եղբայրութեան պահպանութեան միջոց, այլ և անհրաժեշտ պայման՝ սիրոյ առաջնորդող սկզբունքն իրագործելու համար. ուստի վանականները բոլորն էլ անպայման պարտաւոր են աշխատել և խոստովանել «որ ոչ գործիցէ, կերիցէ և մի»: Աշխատանքների ընտրութեան ժամանակ առաւելութիւն է արւում երկրագործական պարապմունքներին և խաղաղ արհեստներին կամ ձեռքի աշխատանքի: Սակայն Բարսեղեան վանքերում ընդարձակ ծաւալ ստացան նաեւ գրական պարապմունքները, և վանքը դարձաւ միանգամայն զպրոց, քրիստոնէական գիտութեան կեդրոն: Արանց վանքերի մօտ յառաջ եկան նաեւ կուսանոցներ: Վանքերը իրենց կոչման ծառայելու համար անհրաժեշտաբար պիտի հիմնուէին շէն տեղերում, բնակութեանց մօտ՝ աշխարհի մէջ: Ս. Բարսեղի վանքերը շուտով մեծ ընդարձակութիւն գը-